

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆՆԱՅԻ.

(Նարեկ-Նալի-Դի-Ն)

Հաւանական է որ նա այնտեղ էլ պատահած լինէր իւր կեանքի բարեկամ Բարսեղին, որը նոյն իսկ տարիքումն էր, որի մէջ ինքն էր, և հազորդ էր նորա բոլոր մտքերին ու ձգտումներին: Բարսեղը Կեսարիայից Կոստանդնուպօլիս ուղևորուեց, իսկ Գրիգորը մտաւ այն ժամանակ հռչակաւոր, Պաղեստինի Կեսարիայի հռետորական նութեան դպրոցը, ուր նա ուսանում էր Թեսպիոս հռետորի մօտ, և ուր նորա ընկերներից մէկն էր ապագայ կէս արիոսական եպիսկոպոս Եւգոյիոս (Ευδοϊή): Այստեղ նա կարողացաւ օգտուիլ Պամփիլիոս նահատակի ժողոված նշանաւոր գրադարանից: Կեսարիայից գնաց այն ժամանակի քրիստոնէական լուսաւորութեան և փիլիսոփայութեան գլխաւոր կեդրոնն եղող Աղէքսանդրիա քաղաքը: Աղէքսանդրիայում նա դէպի Որիգինէսի վաստակները մեծ մտադրութիւն և յարգանք ցոյց տուեց. և հաւանական է որ այնտեղ էլ հանդիպած լինի Աթանասին, որը երկար հալածանքից յետոյ մօտ 350 թուին վերադարձել էր իւր աթոռը:

Քրիստոնէայ պատանիների դատտարակութիւնը այն ժամանակ աւելի երկար ժամանակ էր տևում, քան որքան այժմ հնարաւոր է: Երկու Կեսարիաները (Կապադովկիայի և Պաղեստինի) և Աղէքսանդրիան Գրիգորի ծարաւը դէպի գիտութիւնը չը կարողացան յազեցնել: Նա իր փիլիսոփայական կրթութիւնը աւարտեց Աթէնքում, այս, Պլատոնի, Դեմոսթենէսի և ամեն այլ բազմազան իմաստունների մօր գոգում: Թէպէտ և այդ ժամանակ Աթէնքը եղկելի աւերակ էր և ստուերը իւր նախկին ճոխութեան, այնուամենայնիւ այնտեղ դեռ ծաղկող Հեթանոսական և հռետորական դպրոցները տալիս էին քաղաքին իւր նախկին փառքի մի փոքր նմանութիւնը:

Գրիգորի ցանկութիւնը «Յունաստանի այս աշխին» և նորա նշանաւոր դպրոցին այցելելու այնպէս զօրեղ էր, որ նա չկարողացաւ անգամ սպասել տարուայ բարեյաջող ժամանակին, այլ յուղի անկաւ Հաւասարօրեայ փոթորիկներն սկսուելիս: Երբոր նորա նաւը Կիպրոսին մօտեցաւ, նաւորդներին վրայ տուեց փոթորիկը, որը այնքան երկար շարունակուեց մինչ սպառուեց նաւի մէջ խմելու ջուրը: «Ամեն բան, ասում է նա, մառախուղի մէջ էր» լուսաւորուած միայն կայծակի փայլակով, և դորա հետ էլ նաւի շառաչիլըն ու ճարձատիլը, ճանապարհորդների յուսահատական հառաչանքն աւելի ահուելի էին դարձնում մառախուղը: Փոթորիկը ամբողջ քսան և երկու օր տևեց: Անբաղդ նաւորդների համար, հաւանականաբար, այլ ելք չէր մնացել բացի կամ ծարաւից մեռնել կամ ընկղմուել: Գրիգորը այս օրերին երկիւղի սաստիկ տագնապի մէջ էր, բայց նորա զգացած երկիւղի տագնապը բնաւ մահուան երկիւղից չէր յառաջ գալիս: Նա միայն երկնչում էր, որ դեռ չէր մկրտուել: Գրիգորը իսկապէս, ի խորոց սրտէ, բառի բուն նշանակութեամբ, արդէն քրիստոնեայ էր և նորա խիղճը այնպէս սակաւ էր յանդիմանում նորան՝ իւր մկրտութիւնը յետաձգելուն համար, որ նա մի քանի տարի աւելի ուշ ընդունեց մկրտութիւնը: Չորրորդ դարում առ հասարակ սովորութիւն էր մկրտութիւնը յետաձգել մինչև չափահասութիւն, երբեմն էլ, ինչպէս պատահեց Կոստանդինոս Մեծին, մինչև մահուան անկողինը. որովհետև առանց մկրտուելու վախճանուիլը աւելի փոքր բան էր համարւում, քան մկրտութիւնից յետոյ մահացու մեղքի մէջ ընկնելը: Դորա համար էլ բոլորովին հասկանալի է, որ Գրիգորը և նորա մաքրակենցաղ ծնողքը նոյնպէս յետաձգել էին նորա մկրտութիւնը և ահա նորան տանջում էր միտքը թէ, թէ և ի մանկութենէ նա մաքուր և սուրբ կենեք էր վարել, բայց կարող էր զրկուել փրկութիւնից միայն այն պատճառով՝ որ մինչև ցայն վայր չէր ընդունել մկրտութեան արտաքին արարողութիւնը: Դորա համար էլ երբ բոլորը վախենում էին սովորական մահից, ասում է Գրիգորը, իմ հոգու սարսափը աւելի զարհուրելի էր, որովհետև մահաբեր ալիքների մէջ այս աշխարհիցս հեռանալու վտանգի մէջ էի գտնվում, ողորմելի և չը սրբուած, ծարաւի հո-

գեւոր ջրին»։ Նորա վրդովմունքը այնպէս սաստիկ էր, որ նա իւր ուղեկիցների ուշադրութիւնը իւր վերայ դարձրեց, չնայելով նոցա ևս սարսափելի վտանգի մէջ գտնուելուն։ Նորերը պատռելով և տախտակամածի վերայ ընկած նա աղօթում էր և հեծում և արտասուքի հեղեղի մէջ խօսք տուեց իւր բոլոր կեանքը նուիրել Աստուծուն, եթէ Աստուած կը փրկի նորան որպէս «ծովի և ցամաքի պարզը»։ Այս արդէն երկրորդ նուիրուելն էր իւր կեանքումը։ Նաւը ազատուեց, փոթորիկը դադարեց։ Փիւնիկական մի նաւ նոցա ջուր և այլ պաշար մատակարարեց և նոքա անվնաս հասան Էգիինեան նաւահանգիստը։

Գրիգորը հաւատում էր որ ինքն ազատուել է իւր ծնողների աղօթքի օժանդակութեամբ, որոնք բնազդմամբ կարող էին զգալ որ իրանց որդին վտանգի մէջ է։ Նորա ընկերներից մի քրիստոնեայ մանուկ երազ էր տեսել թէ՛ նորա մայրը Նոննան շտապելով դէպի ծովն է եկել, բռնել է նաւը, և համարեա առանց մի դժուարութեան բարեյաջող ցամաքն է հանել։ Նա միշտ իւր մօրը պաշապան հրեշտակ էր համարում թէ իւր կեանքի և թէ իրանց երկուսի խոստումների համար։ Այս դէպքը նորա վերայ խորը տպաւորութիւն գործեց։ Նորա փոթորկից յետոյ սթափուող միտքը մի տեսիլքի մէջ գտաւ իւր արտայայտութիւնը, թէ «ինքը յաղթանակեց չար գեւի դէմ, որը տքնել էր նորան կորցնել»։

Էգիինեան նաւահանգստից Գրիգորը շտապեց դէպի Աթէնք, և եթէ նա շատ սակաւ է խօսում իւր Կապադովկիայում, Պաղեստինի Կեսարիայում և Աղէքսանդրիայում վարած կեանքի մասին, բայց իւր քառասուն և երեքերորդ ճառում Աթէնքի համալսարանում իւր ուսանողական կեանքի կատարեալ պատկերն աւանդում է մեզ։ Քաղաք մտնելիս՝ նա դեռ պատանի է եղել, առաջին աղուամագերը երեսին, և թողել է քաղաքը արդէն երեսնամեայ այրական հասակում։ Այդ ժամանակ երիտասարդութեան մէջ գոյութիւն ունէր մի «ինքնատիպ սովետութիւն», ինչպէս անուանում է Գրիգորը։

Երիտասարդները Աթէնք էին ձգտում նոյն ինքն Ասիայի հեռաւոր երկրներից, որ ներկայ լինին Հիմերիոս և Պրօքերեսիոս հռետորների դասախօսութիւններին, հռետորների, որոնք այն ժամանակ փառա-

ւորուած էին, թէև այժմ մոռացուած: Աթէնքի ուսանողների կեանքը նմանում էր գերմանական և նմերիկական Համալսարանների ուսանողների կեանքին: Այդ կեանքը նկարագրել է Գրիգորը 381 թուին, Բարսեղի մասին խօսեցած գովասանական ճառում, որից մենք առնում ենք Հետևեալ մանրամասնութիւնները. Չանասէր ուսանողները անցնում էին Հանրագիտական ձևի դասընթացք: Այդ դասընթացքը կազմում էին քերականութիւնը, պատմութիւնը, բանաստեղծութիւնը, երկրաչափութիւնը, աստղաբաշխութիւնը և ոչ միայն թուաբանութիւնը այլ և թուերի այն յարաբերութիւնը և գաղտնիքը, որոնցով զմայլած էին Նէօպղատոնականք: Գիտութիւնների բաժանմունքներից մի քանիսը այնքան էին ուսուցանւում, որքան ուսանողի Համար նոքա կարևոր էին գործնական կեանքում: Աւանդւում էին նոյնպէս և բժշկութեան սկզբունքները, որոնք շատ օգտաւէտ եղան Բարսեղին, որ ոչ միայն բաւական տեղեկութիւն ունէր այդ մասին, այլ և իւր քայքայուած առողջութիւնը պահպանելու Համար տարիներ ընթացքում՝ ինքն իւր բժիշկն էր: Բայց և այդ գիտութիւնները ուրիշների Համեմատութեամբ երկրորդական էին: Աթէնքի գլխաւոր ուսուցիչները Հռետորի և սովեստի անուններով էին փքւում, և Գրիգորը Բարսեղի Հետ իրանց բոլոր ճիգը թափում էին, որ վարժուին նոցա աւանդածներից լաւագունին՝ չիւրացնելով նոցա բարոյական բնաւորութիւնը: Գլխաւոր գիտութիւնը, ինչպէս Գրիգորը անուանում է, «Ճոճօան Հռետորութիւնն» էր Համարւում և նրանից յետոյ իւր կարևորութեամբ գալիս էր գործնական և տեսական փիլիսոփայութիւնը կցելով իւր Հետ նաև բնագիտութիւնը, բարոյական փիլիսոփայութիւնը և տրամաբանութիւնը: Իւրաքանչիւրը դոցանից ըստ այն ժամանակի մոլութեան դէպի «երեքութիւնը» ստորաբաժանւում էին երեք մասնի, ա. Բնագիտութիւնը իւր մէջ բովանդակում էր աստուածաբանութիւնը, թուաբանութիւնը և գաղափարի տեսութիւնը. բ. բարոյական փիլիսոփայութիւնը իւր մէջ բովանդակում էր բարոյագիտութիւնը, տնտեսագիտութիւնը և քաղաքագիտութիւնը. գ. Տրամաբանութիւնը ստորաբաժանւում էր ցուցական, Համոզողական և սովեստական: Այս բոլոր գիտութիւնների մէջ երկու երևելի բարեկամ-

ները մեծ յառաջադիմութիւն էին ցոյց տալիս և Բարսեղը բոլոր ախոյեաններին գերազանցում էր:

Պատական Հին գրականութիւն ուսումնասիրելը երկար ժամանակ էր տեւում: Շատ քրիստոնեաներ կասկածով էին վերաբերվում դէպի Հեթանոս մեծ գրողների գրքերի ընթերցումն, բայց Պրիգորն ու Բարսեղը այդպիսի անձուկ նախապաշարումից բարձր էին կանգնած: «Մենք պարտաւոր չենք, ասում է Պրիգորը, արհամարհել երկինքը, երկիրը և օդը միայն այն պատճառով՝ որ ոմանք սխալմամբ նրանց պաշտելու առարկայ են դարձրել, Աստուծոյ արարածը Աստուծոյ տեղ դնելով^(*)» այլ վայելելով կեանքին և երջանկութեանը նպաստող այն բոլոր լաւ և օգտակար բաները՝ որ նոցա մէջ գտնւում են, մենք խոյս կտանք այն բոլորից, ինչ որ վտանգաւոր է արարածը Արարողի ախոյեան չրկանգնեցնելով, ինչպէս որ անում են յիմարները, այլ արարածներից Արարողին Հասնելով, և, ինչպէս ասում է աստուածային առաքեալը, մեր բոլոր մտածողութիւնը Քրիստոսին Հնազանդեցնելով: Մենք ընդունում ենք այն ամենը, ինչ որ վերաբերում է ճշմարտութիւնը Հետազօտելուն և ըմբռնելուն, բայց այն բոլորը, ինչ որ մարդոց դէպի դէն է առաջնորդում, դէպի գայթակղութիւնն ու կորստեան անդունդը՝ մենք հերքում ենք, բացի միայն այն բանից, որ դոցա մէջ էլ կարող է լինել մի բան՝ որ կնպաստէ մեզ բարեպաշտութեան մէջ Հաստատուելուն, լաւը վատից որոշելուն և մեր սեպհական ուսման ոյժը նոցա տկարութեան մէջ գտնելուն»:

Այս երկու կապադովկեցիների պէս Աթէնքի ուսանողներից սակաւներն էին լուրջ տրամադրուած: Ուսանողների գլխաւոր ձեռգտման առարկան էին այն ժամանակ աչքի ընկնող սովեւստները, և սակաւ աչքի ընկնող երիտասարդները կազմում էին իրանց սիրելիներին պաշտպանելու Համար զանազան կուսակցութիւնք: Այս մրցման Հոգին այնքան լաւիող էր, որ նոյն իսկ աւելի խելամիտ երիտասարդներն անգամ վարակուած էին կուսակցական ոգւով, և այս

(*) Բոսսիւէն ասում է, որ Յոյները ամեն բան Աստուած էին համարում բացի իսկական Աստուծուց:

բանի հետևանքն այն էր, որ Աթէնքի համալսարանական ընկերութիւնը բաժանուել էր շրջանների, որոնք միմեանց փոխադարձ ախոյեաններ էին :

«Դուք կարող էք տեսնել թէ ինչպէս նոքա ևս, ասում է Գրիգորը, ոգևորվում են նոյն կատաղի կողմնապաշտութեամբ, որպէս կրկէսի կուսակցութիւնները: Այնպէս, ինչպէս յուզուած հանդիսականները ձիարշաւի ժամանակ իրար են անցնում, գոչում են և աւագը վեր են ցփնում. և թէև նստած՝ բայց հեծեալների շարժումներ են գործում, յօշոտում են օգը գաւազաններով որպէս թէ հարուածում են իրանց երիվարներին, գաւազանի տեղ՝ իրանց մատները գործածելով. սանձում և ապերասան են թողնում իրանց ձիերին, և յատկապէս այն մարդիկը, որոնք աղքատ են և գուցէ չունին օրական պարէնը մի օրուայ համար անգամ, — ճիշտ այդպէս են պաշում իրանց այս ուսանողներն էլ միմեանց ախոյեան եղող ուսուցիչների վերաբերութեամբ: Նոցա միակ նպատակն է, որ իրանց կուսակցութիւնը զօրացնեն, այսպէս ջանահնար լինելով մեծարել իրանց ուսուցիչներին: Այս ամենը ցհրէշութիւն անհեթեթ է»:

Թէ այս սովեստները ինչ մարդիկ էին, որ ոգևորում էին այն ժամանակի թէ հեթանոս և թէ քրիստոնեայ երիտասարդներին, այնպիսի անսանձ ոգևորութեամբ, այդ մենք կարող ենք գիտենալ Լիբանիոսի, Էւնապիոսի և Փոտի շարադրութիւններից: Այդ սովեստներին վերաբերեալ գծագրուած պատկերը բնաւ մխիթարական չէ: Նոքա սովեստ անունը կրում էին որպէս պատուոյ տիտղոս: Նոքա մեծ մասամբ գործ էին դնում ասիական փքուն ոճը, որ այնքան անպէտք էր թուել, մինչ շատերի շարադրութիւնները բոլորովին կորան: Նոցա ամբարհաւածութիւնն ու ագաշութիւնը, նոցա փոխադարձ շողմարարութիւնը կամ անհաշտ թշնամութիւնը նոցա ծաղու առարկայ էին դարձել յաչս բոլոր բարեխոհ մարդկանց: Նրիտասարդներն ամեն ժամանակ բոլոր աշխարհում շատ կամ սակաւ նման են միմեանց: Գրիգորը նկարագրում է այն «ընծայումն», որ խիստ պահանջվում էր Աթէնքում՝ ուսանողների մէջ, նախքան նորեկի՝ նոցա ուսանողական ընկերութեան մէջ մտնելը: Այդ նման

էր այն փորձերին, որոնց նորեկը ընդհանրապէս ենթարկւում է Անգլիայի հասարակական դպրոցներում կամ Գերմանիայի համալսարաններում: Այս ընծայումն կոչւում էր «Բաղանիք», որից նորեկները սաստիկ վախենում էին: Նոր ուսանողին հանդիպում էին նաւահանգստում և ճանկում էին նորան կամ բռնի կամ նորահամաձայնութեամբ: Այս «կիսահանաք և կիսալուրջ ատտիկական մի սովորութիւն էր»: Ամենից առաջ նորան հիւրասիրութեամբ ընդունում էին նոցա տանը, ով ամենից առաջ հանդիպել էր նորան, լինէր նա սոփեստի աւելի հասուն աշակերտներից մէկը, կամ հայրենակիցը, կամ բարեկամը, կամ ազգականը: Աւելի ազգատ ուսանողները, իսկապէս, իրանց կողմից որպէս վճարք աշխատում էին իրանց ուսուցիչների համար շատ հետեւողներ շահել: «Յետ այնորիկ, ասում է Գրիգորը, նորեկին ենթարկում էին ծաղրի, և ծանակի, ով որքան կամենար: Այդպիսի ծանականքի նպատակն էր նորեկի միջից արմատախիլ անել բոլոր մեծամտութիւնը և հէնց սկզբից նորան հեղինակութեան ենթարկել: Այս ծանականքը աւելի կամ պակաս համարձակ և սրամիտ էր լինում, նայելով երիտասարդի կոպտութեանը կամ նրբամտութեանը: Այս բանը չտիպազանց զարհուրելի և խիստ էր նոցա համար, որոնք գաղտնիքը չգիտէին, բայց ոյք դորա ելքը գիտէին, նոցա համար այդ շատ ախորժելի և սիրելի էր, որովհետեւ այն բանը, որով սպառնում են, շատ անգամ սպառնալիքի միայն երեւոյթն ունի: Նորեկին այնուհետեւ ուսանողաց հսկողութեամբ տանում էին բաղանիք: Արարողութիւնը այսպէս էր կատարւում: Այն ուսանողները, որոնք պէտք է ընծայեցուցանէին նորեկին, շարվում էին կարգով երկու երկու ոչ հեռու իրարից, և այսպէս նորան բաղանիք էին տանում: Երբ որ նոքա մօտենում էին բաղանիքին, սկսում էին թռչկոտել և աղաղակել, կարծես կատաղած լինէին, աղաղակում էին, որ նոքա չպէտք է յառաջ գնան, այլ պէտք է կանգնեն, որովհետեւ բաղանիքը ներս չի թողնիլ նոցա: Այդ ժամանակ նոքա բաղիւում էին դուռը, երիտասարդին վախեցնելով իրանց որոտաձայն և «կանց, կանց» գոռում գոչումովը, նոյնպէս և մի քանի հարուածներով և յարձակմունքներով որ տեսում էր բաւական ժամանակ: Աւեր-

ջապէս նոքա թողնում էին նորան ներս մտնել և ազատութիւն էին տալիս, և այսպիսի բաղանիքից յետոյ ընդունում էին նորան իբրև իրանց անդամակից: Նորեկը մի յայտնի գումար էր վճարում գլխաւոր սովիեստներին, որոնք ակրօմիտներ (կատաղիներ) էին կոչվում, և մի քանի ժամանակ անցնելուց յետոյ, նորան թոյլատրվում էր կրել յատուկ վերարկուն:

«Իւր բնակութեան համար վճարքի» այս սակաւ ինչ կոպիտ միջոցը ի հարկէ Գրիգորի լուրջ հոգու համար անախորժ էր: Միայն նորանից յետոյ երբ սկսեց իւր ուսանողական կեանքը, նա ունեցաւ մեծ հաճոյք Աթէնքում իւր բարեկամ Բարսեղին ողջունելու: Բարսեղն Աթէնք ժամանեց ճարտարաբանական ընդունակութեանց և գիտութեանց մէջ արդէն մեծ անուն հանած, և Գրիգորը գիտէր որ ուսանողների խաղը նորա արժանաւոր և համեստ բնաւորութեանը անախորժ պէտք է թուէր, ուստի և յայտնեց Աթէնքի երիտասարդութեանը որ այս անգամ զանց առնեն իրանց հին սովորութիւնը: Այդ երիտասարդներից շատերը արդէն լսել էին Բարսեղի համբաւը, և նոքա իրաւացի էին համարում նորա հետ փոքր ինչ ուրիշ կերպ վարուելը քան թէ վարվում էին այլ նորեկների հետ: Նա համարեա միակ անձն էր, որ իւր բարեկամի նախահոգութեան շնորհիւ ազատուեց բաղանիքի միջոցաւ աղմկալից և որոտալից ընծայումից:

Բարսեղը այս ծառայութեան համար շնորհակալ եղաւ և նորա սրտագին բարեկամութիւնը իւր հայրենակցի և ընկերակցի հետ աւելի ամրապնդուեց այն պատահմունքով, որը նորից հետաքրքրելի լոյս է սփռում Աթէնքի չորրորդ դարի սովիեստների դրպրոցների վերայ: Երիտասարդները դպրոցներումը բաժանվում էին ազգայնական հիմունքների վերայ ձևակերպուած ակումբների կամ կաճառների, նոցա մէջ գտնվում էր և հայ երիտասարդների ակումբը: Անշուշտ, հայերը դէպի կապադովկեցիները լաւ տրամադրուած չէին, ամեն դէպքում նոքա նախանձում էին Բարսեղի փառքին և հեռի չէին ուսանողական վարպետութեամբ նորա հպարտութիւնը փոքր ինչ կոտրել: Հայ ուսանողները արդէն ճանաչում էին նորան, որովհետև նոցանից մի քանիսը Պոնդոսի Նեօկեսարիայում նորա հօրը

աշակերտել էին. և երևակայում էին որ կարող են օգտուելով իրանց ղեռնոր աւարտած գիտութեամբ յաղթանակել նորան: Սորա համար էլ հայ երիտասարդները բարեկամութեան պատրուակով մօտեցան Բարսեղին և հակաճառել սկսեցին՝ որի համար առաջուց նախապատշաաստուել էին: Չնայելով այս բանին՝ այս վիճաբանութեան մէջ նոցա չյաջողուեց, և Գրիգորը, չկասկածելով նոցա չարամտութեան համար՝ ասպետաբար թոյլ կողմն անցաւ, այն մտքով որ Աթէնքի ճոխաբանութեան փառքը չնսեմանար նորեկի (Բարսեղ) վճռական յաղթութեամբը: Նորա օգնութիւնը այնքան զօրաւոր էր, որ նա հայոց խորտակուած ոյժը վերականգնեց և վիճաբանութիւնը դրեց նորից հաւասարակշիռ պայմանի մէջ: Սորանից յետոյ Բարսեղը սկսել էր արդէն կորցնել ապացուցութիւնների հիմքը. երբ Գրիգորը նորից դերը փոխելով՝ իւր բարեկամի կողմն անցաւ, և հաւասարակշռութիւնը այնքան վերականգնեց, մինչ Բարսեղը իւր պարտութիւնը յաղթանակի փոխեց և վերջնականապէս խորտակեց իւր ընդդիմախօսներին *):

Այս երկրորդ ծառայութիւնից յետոյ երկու համերկրացիների մէջ բարեկամութիւնը «կայծից՝ բարձր և բորբոքուող բոց դարձաւ» և այդ բարեկամութիւնը երկուսի համար էլ այնքան թանկագին էր, որ նոքա կարողացան բոլորովին արհամարհել նոցա վերաբերութեամբ արդէն յայտնուած՝ իսմբի թշնամական վարմունքը, որ Գրիգորին մեղադրում էր այն բանում թէ նա դաւաճանեց ոչ թէ իրանց, այլ նոյն իսկ Աթէնքին:

Աթէնքը Բարսեղին շուտով տաղտկացրեց. Աթէնքի համալսարանը սթափեցրեց նորան և նորա գէմքը մռայլուեց այն խորհրդով թէ ինքն թողեց իւր ծննդավայրը այս աղմկալից և դատարկ ճամարտակութեան տեսարանին այցելելու համար: Նա Աթէնքը անուանում էր «ունայն երանութիւն»: Գրիգորը խնդրեց նորան ղեռ մնալ:

*) Հայ երիտասարդների գիրքը նախանձոտ Յունաստանում յոյն երիտասարդների մէջ յայտնի է թէ ինչ կըլինէր, եթէ այս գէպքի նկարագրութիւնը հայ գրչի տակից գուրս գար՝ գուցէ այլ միտք ունենար:

Եթէ նորա առաջին հայեացքով սովեստ և հռետոր ուսուցիչները
 երևացել էին նորան զուրկ բոլոր իմաստութիւնից, գոնէ նա այնու-
 ամենայնիւ չը պէտք է չափազանց աճապարանօք նոցա մասին եզ-
 րակացութեան գար, այլ պէտք է սպասէր և դիտէր: Բարսեղը յօ-
 ժարեց, և երկու բարեկամները այդ ժամանակից սկսած ապրում
 էին միեւնոյն յարկի տակ և հաղորդ էին միեւնոյն սեղանին՝ կազմե-
 լով մի սիրտ և մի հոգի: Նախ միեւնոյն գիտութիւններովն էին
 զբաղվում առանց բնաւ հակաճառելու և նախանձելու և միմեանց
 փոխադարձաբար լաւ օրինակ էին հանդիսանում: Նոցա բա-
 րեկամութիւնը ապագայ փորձանքների ժամանակ անյողդողդ-
 մնաց, որովհետեւ այդ բարեկամութիւնը միայն արտաքին երևոյթի
 վերայ չէր հիմնուած: Դա մաքուր և ուղղախոհ բարեկամութիւն
 էր և շատ յարգելի նոցա համար, որովհետեւ Աթէնքում, «կուռ-
 քերի չար մնացորդներով այնքան հարուստ» այդ քաղաքում
 համընթաց էին հաւատքի համար, ինչպէս բարոյական նոյնպէս
 և հոգեկան շատ վտանգներ: Այդ բարեկամութիւնը նոցա հնա-
 րաւորութիւն էր տալիս մեծ ուրախութեամբ և հաւատարմու-
 թեամբ լինել և կոչուել հեթանոս քաղաքում քրիստոնեայ, և այս
 կոչումը նախադասել բոլոր այլ բաներից, որոնք ուսանողների հա-
 մար պահանջ էին: Երիտասարդներից շատերը, որոնց մէջ նոքա ա-
 պրում էին, իրանց թանկագին ժամանակը մեռցնում էին Աթէն-
 քում, ինչպէս մեռցնում են բոլոր համալսարաններում: Նոքա
 ծոյլ էին, ցոփ և պառակտումների անձնատուր եղած: Այդպիսի
 բոլոր ընկերներից խոյս տալով երիտասարդ կապաղովկեցիները, բա-
 րեգործներից ու լուրջներից էին ընկեր ընտրում: Նոքա խուսափելով
 խնձոյքներից, թատրոններից, հասարակական ժողովարաններից և
 ամեն տեսակ արբեցութիւններից այցելում էին քրիստոնեայ ու-
 սուցիչների զրոյցներին: Աթէնքի սովեստների մեծամասնութիւնը
 հեթանոս էին, և նոքա գիտէին իրանց կոպիտ կուսպաշտութիւ-
 նը վարագուրել ու հաճոյական դարձնել փիլիսոփայութեան և
 դիցաբանութեան պաճուճեալ գեղեցկաբանութեամբ: Հեթանո-
 սութեան այսպիսի ջատագովութեամբ և պաշտպանութեամբ
 շատ քրիստոնեայ երիտասարդներ հաւատի անձնուիրութեան

մէջ դրդուած էին: Բայց Գրիգորն ու Բարսեղը չափազանց նուիրուած էին քրիստոնէական վարդապետութեանը և չափազանց ամուր էին նորա մէջ, նոքա չէին ընկճուել Հռետորականութեամբ, որի մէջ նոքա գերազանց էին և սովեստութեամբ՝ որի, ինչպէս նոքա տեսնում էին, միայն արտաքին փայլն էր փաղփաղում: Եթէ մի ուրիշի համար Աթէնքը լինէր իսկական ոսկի, ասում է Գրիգորը, իմ համար միայն գեղեցկի յառաջ բերողն է, ես այնտեղ որոնում էի ճարտարաբանութիւն և բաղդ գտայ, որովհետեւ ես գտայ այնտեղ Բարսեղին: Ես Սաւուղի պէս եղայ, որ էշ փրնտուելիս՝ իւր համար թագաւորութիւն գտաւ: Պատահական գիւտս բարձր եղաւ քան գլխաւոր նպատակս:

Անկասկած, նոքա մի քանի տարի մնացին Աթէնքում. Բարսեղը միակ Հուչակուած անձն չէր, նորան համապատիւ էր եւ Գրիգորը: Այնտեղ նա այնպիսի անձնաւորութեան հետ էլ ծանօթացաւ, որպիսի էր ազգականն ու յաջորդը Կոստանդի՝ Յուլիանոսը, որը հազիւ տարով փոքր լինէր նորանից և եկել էր Աթէնք Կոստանդի հաճութեամբ, որ կատարելագործէ իւր կրթութիւնը: Նա 361 թուին կայսր դարձաւ, դորանից մի տարի յետոյ Բարսեղն ու Գրիգորը թողին Աթէնքը: Կոչմամբ նա քրիստոնեայ էր, որովհետեւ քաղաքականութիւնը այդ էր պահանջում. բայց բոլորին էլ յայտնի է որ ի ներքուստ նորա միտքը հակուած էր դէպի հեթանոսութիւն: Նա ներկայացրեց, ասում է մի հեթանոս սովեստ, Եզովպոսի առակը՝ որովհետեւ սքողեց առիւծին իշի մորթիով: Գրիգորը օթտուած էր թափանցող բնաւորութեամբ և յայտնի տեսնում էր Յուլիանոսի կեղծաւորութիւնը: Նորա հանգիպելուց յետոյ շուտով նա իւր բարեկամների մօտ գոչեց. «որպիսի անիծեալ անձն է նախապատրաստում կայսերութիւնը իւր համար»: Նորա վարքի անկայունութիւնը, ասում է նա, և նորա ոգևորութեան առաւելութիւնը ինձ մարգարէ դարձրին: Ես լաւ նշան չեմ համարում նորա պարանոցի թուլութիւնը, որ նա իւր ուսերը յաճախ վեր ու վար է անում սրիկաների պէս, որ նորա հայեացքը խեղ է և զառաժեալ, որ նա իւր աչքերը յածում է խենթի պէս և ամուր ու հանգիստ չէ կանգնում ոտքերի վերայ: Նոյնքան էլ սակաւ է դիւր գալիս ինձ նորա

ամբարհաւածութիւնը և արհամարհանք շնչող քիթը, չսիրեցի նորա գէմքի ծաղրող արտայայտութիւնն էլ, որ նորա ամբարհաւածութեան վկան է, նորա անկարգ և գոչիւն ծիծաղի ժխտը, նորա գլուխ խոնարհեցնելն ու շարժելը առանց մի յարգելի պատճառի, նորա խօսակցութեան դանդաղ և ցնցող յատկութիւնը, նորա յանկարծական և անմիտ հարցերը և վատ պատասխանները, որոնք միմեանց յաճախ ընդդիմաբանում են և թուում են բոլորովին անկանոն» :

Կասկած չկայ որ այս նկարագրութեան մէջ չի աշխատում ծածկել իւր զօրեղ ատելութիւնը դէպ ի ապագայ հաւատուրացը, և միտ չի առնում Յուլիանոսի դրութեան դժուարութիւնները և շրջոթեցնող վտանգները, որոնցով շրջապատուած էր նորա պատանեկութիւնը :

Յուլիանոսի գլխաւոր յատկանիշ գծերը աւելի ևս լաւ նկարագրել է հեթանոս պատմիչ Ամմիանոս Մարցելինոսը, որ նորա արտաքին պատկերը նկարում է, նորա միջակ հասակը, փափուկ մազերը, թանձր և սուր վերջացած մօրուքը, արտայայտիչ աչքերը, գեղեցիկ յօնքը, ուղիղ քիթը, մեծ բերանը, վայրահակ վարի պոօշը, ամուր ծործորակը և լայն ուսերը, և ասում է, որ նորա բոլոր կազմուածքը լաւ էր ներդաշնակաւորուած, նա արտայայտում էր նորա հսկայական ոյժը : Մարցելինոս դէպ ի կայսրը ջերմ համակրութիւն է տածում, բայց համարում է որ նորա բնաւորութեան և մտածմանց մէջ կայ ասիական թեթեւամտութեան հետք, որ նա չափազանց յախուռն է խօսում և հազիւ է կարողանում զսպել իւր լեզուն : Իւր «Միսօպօգոն», երկասիրութիւնում ինքն Յուլիանոսը տալիս է մեզ իւր նկարագիրը, գահը ամբառնալուց յետոյ, հագնելով մի կիւնիկեանի վերարկու, վարելով նորա կեանքը, ունելով նորա երկար եղունգները, կեղտոտ ձեռքերը, թաւամազ կուրծքը և ռամկական մօրուքը, որով նա կամենում էր վրէժ առնել բնութիւնից, որ նորան չէր տուել աւելի գեղեցիկ դէմք :

Ահա եկաւ ժամանակը, երբ Բարսեղն ու Գրիգորն ուսանելու օրը, ինչ որ հնարաւոր էր Աթէնքի ուսուցիչներից ուսանել : Հասաւ հրաժեշտի օրը, որը պէտք է դառնար աւելի կատարեալ հասակի և

«կսուող յոյսերի առաջին օր» յոյսերի որոնց նոքա համաձայն էին հաւասար կերպով հաղորդ գտնուիլ: Աթէնքից հեռանալը, անտարակոյս, տխրալի էր: Նոցա բարեկամութիւնը առակ էր եղել, և նոցա շուրջը խմբուել էին ուրիշ շատ բարեկամներ: Նոցա անունը մեծապէս յարգվում էր ոչ միայն նոցա ուսուցիչներից և ընկերակից ուսանողներից, այլ և բոլոր ֆունաստանից: Նոքա չէին կարողանում հրաժեշտ տալ իրանց սիրողներին, և այնքան հրապոյրներով լի վայրին, առանց յորդ արտասուքի և գրկախառնութեան: Ռէպի Պիրէա նոցա ուղեկցում էին ընկերակիցների ամբողջ խումբը՝ նաև ուսուցիչներից մի քանիսը, և ջանահնար էին լինում համոզել նոցա որ մնան: Բարսեղ այս բոլոր թախանձանքի դէմ, անողոք մնաց, բայց Գրիգորը զիջաւ: «Ես Աթէնքում մնացի, ասում է նա, մասամբ, անկեղծօրէն ասելով, որովհետև թախանձում էին, և մասամբ էլ նորա համար, որովհետև դաւաճան ունեցայ նրան, որը համոզուեցաւ թողնելու իրան թողնել չըկամեցող մարդուն: Եթէ այս չպատահէր, ես չէի կարող հաւատալ այս բանին, և ես զիջայ նորանց, ոյք ցանկանում էին ինձ յետ պահել: Մեր երկուսի համար անջատումն կարծես մահուան դատավճիռ լինէր»:

Բայց երբ Բարսեղը հեռացաւ, Աթէնքը Գրիգորի համար անտանելի դարձաւ: Նորան, ինչպէս երևում է, առաջարկեցին հոետորութեան ամբիոն, բայց նա աւելի մեծ նպատակ ունէր: Նա Աթէնքում երկար չըմնաց, և ինչպէս ինքն է ասում, «հոմերական ձիուպէս, ես խորտակելով ինձ պահել կամեցողների սանձը, և քամապընչած դոփիւնով հարթավայրի մէջ խիզախելով՝ աշտանակեցի զէպի իմ բարեկամը»:

(ԿԸ ՇԽՐՀԱՆԻՆ): Թարգմ. Յ. Վ. Մ.